**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, ԵՐԵՎԱՆ 0010, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4, Հեռ. 56 40 14, ֆաքս 543997, E-mail: info@anra.am

№ 11- Ա. 55 26.03 2015թ.

**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ**

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի (այսուհետև՝ Կոմիտե) 2015 թվականի 2-րդ կիսամյակի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքներ՝ «Ռեգուլյար» և «Պրեմիում» տեսակի բենզին:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում **«ՇՀԱՊՁԲ-15/17 ՄԱ»**:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետև՝ կայք) միջոցով, ոչ ուշ, քան 2015 թվականի ապրիլի 7-ը, ժամը 10:00:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Սոնա Շիրինյանը:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով, www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով՝ հայտերի բացման համար կայքում նշված օրվա նշված ժամին:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կարիքների համար «Ռեգուլյար» և «Պրեմիում» տեսակի բենզինի ձեռքբերումը:

ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի կարիքների համար՝ «Ռեգուլյար» և «Պրեմիում» տեսակի բենզինի (որոնք կազմված են 1 և 2 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված N1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (հավելված N2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրերի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

*ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ s.shirinyan@anra.am:*

Հարգանքով՝

Ս.ԱՄԱՆՅԱՆ

Ս.Շիրինյան
543996